

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 35 ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԿԵՏԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ, 49 ՆՈՂՎԱԾԻ «Ե» ԿԵՏԻ, 112 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 4-ՐԴ ԿԵՏԻ ՎԵՐՋԻՆ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ 5-ՐԴ ԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՍԱՏՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈ-
ՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 փետրվարի 2007թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ.Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի,
Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի՝ Նանրապետության Նախագահի պաշտո-
նական ներկայացուցիչ՝ ՆՆ Նախագահի օգնական Գ. Միերյանի, գործով որպես
պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական
ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության
վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
Նայաստանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի
կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ
կետերի վերջին նախադասությունների, 49 հոդվածի «ե» կետի, 112 հոդվածի 2-րդ
կետի, 4-րդ կետի վերջին նախադասության եւ 5-րդ կետի դրույթների՝ ՆՆ
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի բացատրությունները, հեղափոխելով օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի փետրվարի 20-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 12-ին, փոփոխվել եւ լրացվել է 2002թ. հուլիսի 3-ին, 2004թ. դեկտեմբերի 24-ին եւ 2006թ. դեկտեմբերի 25-ին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «Չորսօրյա նիստերի յուրաքանչյուր երեքշաբթի օրը՝ ժամը 17-ից, պարզամավորները, ըստ հերթագրման հաջորդականության, կարող են հանդես գալ մինչեւ 3 ռուպե փետողությամբ հայտարարություններով: Անհրաժեշտության դեպքում նիստը վարողը կարող է նիստը երկարաձգել մինչեւ 30 ռուպեով: Նիստի փետագրությունը հաջորդ օրը՝ ժամը 21.30-ին, ամբողջությամբ ցուցադրվում է Նանրային հեռուստաընկերությամբ»: Օրենքի 35 հոդվածի 4-րդ կետը սահմանում է. «Ներթափանցանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստում վարչապետը եւ Կառավարության անդամները, սույն օրենքի 105-րդ հոդվածով սահմանված կարգով, պապասխանում են պապզամավորների հարցերին: Նիստի փետագրությունն ամբողջությամբ ցուցադրվում է Նանրային հեռուստաընկերությամբ նույն օրը՝ պապզամավորների հայտարարությունների հեռարձակումից անմիջապես հետո»:

Օրենքի 49 հոդվածը վերնագրված է «Ազգային ժողովի գործունեության կազմակերպման վերաբերյալ որոշումները»: Տվյալ հոդվածի «ե» կետի համաձայն Ազգային ժողովն իր գործունեության կազմակերպման հարցերի շրջանակներում կարող է որոշում ընդունել նաեւ՝ «Նանրային հեռուստաադիորնկերությամբ Ազգային ժողովի նիստի՝ ուղիղ եթերով կամ փետագրությամբ (ձայնագրությամբ) հեռարձակելու մասին»:

Օրենքի 112 հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Ազգային ժողովի դռնբաց նիստերը հեռարձակվում են Նանրային ադիորնկերության ուղիղ եթերով, եթե Ազգային ժողովն այլ որոշում չի ընդունում»: Նույն հոդվածի 4-րդ կետի վերջին նախադասությամբ ամրագրված է. ««Խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղոր-

դաշարը հեռարձակվում է Նանրային հեռուստատեսությամբ՝ կիրակի օրը՝ ժամը 21-ին»: Միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ կետով նախատեսվում է. «Սույն օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված նիստերի փեսագրությունների, ինչպես նաև Ազգային ժողովի նիստերի ուղիղ հեռարձակումների եւ Ազգային ժողովի որոշմամբ սահմանված դեպքերում Ազգային ժողովի նիստերի փեսագրությունների (ձայնագրությունների) արտադրությունն իրականացնում է Նանրային հեռուստառադիոընկերությունը»:

Վիճարկվող դրույթներից միայն օրենքի 112 հոդվածի 4-րդ կետն է ամբողջությամբ շարադրվել նոր խմբագրությամբ՝ 2004թ. դեկտեմբերի 24-ին ընդունված՝ ««Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի 39 հոդվածի հիման վրա:

ՆՏ Սահմանադրության 27 հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, սրանալու, փարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրարվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»:

Նոդվածի վերջին երկու մասերը ՆՏ Սահմանադրության մեջ ամրագրվեցին 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

Սահմանադրության 62 հոդվածը սահմանում է. «Նայաստանի Նանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ եւ 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային

ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում եւ հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ եւ հայտարարություններ:

Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման եւ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ Ազգային ժողովի կանոնակարգով»:

2. Դիմող կողմը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասությունների, 49 հոդվածի «ե» կետի, 112 հոդվածի 2-րդ կետի, 4-րդ կետի վերջին նախադասության եւ 5-րդ կետի դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 27 եւ 62 հոդվածներին՝ այն պարճառաբանությամբ, որ, նախ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35, 49 եւ 112 հոդվածներով սահմանվող պարտականությունների պայմաններում չի երաշխավորվում Նանրային հեռուստառադիոընկերության՝ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված լիարժեք անկախությունը: Ընդ որում, ՆՏ Սահմանադրությունը հստակեցնում է այն ոլորտները, որոնցում ռադիոյի եւ հեռուստատեսության անկախությունը եւ գործունեության ապահովումը պետության կողմից երաշխավորված պետք է լինի, դա վերաբերում է փեդեկապիտալիստական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովմանը:

Երկրորդ՝ ՆՏ Սահմանադրության 62 հոդվածի համաձայն՝ ՆՏ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են բացառապես Սահմանադրությամբ: Այդ իսկ պարճառով, Կանոնակարգի 49 հոդվածի «ե» կետով չի կարող նախատեսվել ՆՏ Ազգային ժողովի լիազորություն՝ կայացնելու որոշում՝ պարտավորեցնելով Նանրային հեռուստառադիոընկերությանն ուղիղ եթերով կամ փեսագրությամբ հեռարձակելու ՆՏ Ազգային ժողովի նիստը: Նման որոշումը չի կարող պարտադիր բնույթ ունենալ, քանի որ ՆՏ Ազգային ժողովին՝ Նանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ որեւէ որոշում կայացնելու իրավասություն ՆՏ Սահմանադրությունը չի նախատեսում: Բացի դրանից, ըստ դիմող կողմի՝ ՆՏ Սահմանադրության 62 հոդվածով հստակ սահմանված է կանոնակարգով կարգավորման ենթակա հարցերի շրջանակը: Մասնավորապես, կանոնակարգով կարող է սահմանվել ՆՏ Ազգային ժողովի

գործունեության, նրա մարմինների ձեւավորման եւ գործունեության կարգը, որեւէ այլ հարաբերություն կանոնակարգով չի կարող կարգավորվել:

Երրորդ՝ դիմող կողմը փաստում է, որ գործադիր իշխանության մարմինների իրավական ակտերով եւս չեն նախատեսվում պարտականություններ Նանրային հեռուստառադիոընկերության համար: Մասնավորապէս, ՏՏ Նախագահի 2002թ. մարտի 13-ի «ՏՏ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՏ-1064 հրամանագրում որեւէ դրույթ չկա Նանրային հեռուստառադիոընկերության մասին: Կանոնակարգով նախատեսված Նանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ դրույթներն անհավասար պայմաններ են սրեղծում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար:

Չորրորդ՝ ըստ դիմողի, Կանոնակարգի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասությունները չեն բխում ՏՏ Ազգային ժողովին ՏՏ Սահմանադրության 62 հոդվածով վերապահված լիազորություններից, բացի դրանից, օրենքով սահմանվում են վարքագծի համապարփադիր բնույթի կանոններ, իսկ Կանոնակարգի նշված հոդվածով սահմանվել է Նանրային հեռուստառադիոընկերության համար պարտավորություն, որը փոխադարձ համաձայնությունների շրջանակում կարգավորման ենթակա հարց է:

Տինգերորդ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով Նանրային հեռուստառադիոընկերության համար պարտականություններ սահմանելը չի բխում նաեւ միջազգային իրավական փաստաթղթերի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի պահանջներից:

Ըստ դիմող կողմի՝ Նանրային հեռուստառադիոընկերության անկախության կարեւորագույն փորձերից է խմբագրական անկախությունը, այն է՝ հեռուստառադիոընկերության ծրագրային քաղաքականության, հաղորդացանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնությունն ու ազատությունը, ինչպէս նաեւ այդ գործընթացների վրա պետական եւ քաղաքական իշխանությունների ազդեցության բացառումը: Նանրային հեռուստառադիոընկերությունների անկախության հիշյալ կարեւորագույն սկզբունքները երաշխավորված են միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերով, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրո-

պական կոնվենցիան (10-րդ հոդված), Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1982թ. ապրիլի 29-ի՝ Արտահայրվելու եւ փեղեկարվության ազատության հռչակագիրը, Նախարարների կոմիտեի՝ Նանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը, ԵԽԽՎ-ի 1641 (2004) 1 հանձնարարականը:

3. Պապասխանող կողմը գրնում է, որ, նախ՝ ՏՏ սահմանադրական փոփոխությունները փվյալ ոլորտում իրոք օրենսդրական փոփոխությունների խնդիր են առաջացրել: ՏՏ Ազգային ժողովում աշխատանքներ են փարվում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի դրույթները եւ հանրային հեռահաղորդակցության ոլորտի իրավական կարգավորման հարցերը սահմանադրական փոփոխություններին եւ ՏՏ միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելու համար:

Երկրորդ՝ պապասխանող կողմը գրնում է, որ Ազգային ժողովի գործունեության լայն հրապարակայնության ապահովումը ժողովրդավարական ձեռքբերում է եւ այդ ավանդույթից պերք չէ հրաժարվել: Խնդրո առարկա հարցերի առնչությամբ կարարված ուսումնասիրությունները վկայում են, որ Եվրոպական խորհրդարանի եւ մի շարք պերությունների խորհրդարանների աշխատանքները լուսաբանվում կամ հեռարձակվում են հավարարմագրված գանգվածային լրարվության միջոցների կողմից, կամ խորհրդարաններն ունեն սեփական հեռուստառադիոալիքներ կամ ինտերնետ կայքեր, որոնց միջոցով հեռարձակումը կարող է լինել ուղիղ կամ փեսագրված:

Երրորդ՝ պապասխանող կողմն ընդգծում է նաեւ, որ հիմնականում պերությունների խորհրդարաններն օրենսդրորեն չեն սահմանում իրենց նիստերի հեռարձակման կոնկրետ օրն ու ժամը, սակայն կարող են որոշում ընդունել նիստերը հեռարձակելու ժամանակի եւ ծավալի վերաբերյալ: Այնուամենայնիվ, շար պերություններում խորհրդարանի աշխատանքների հեռարձակման միտումը պայմանավորված է նրանով, որ խորհրդարանը, լինելով ներկայացուցչական մարմին, ձեւավորում է պերության իրավական դաշտը, հերեւաբար, նրա գործունեությունը պերք է լինի առավել հրապարակային եւ թափանցիկ: Իսկ հանրության հեր սամենագործուն կապը հեռուստափեսությունն է:

Չորրորդ՝ ՏՏ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ մասով երաշխավորված է լրարվամիջոցների եւ փեղեկարվական այլ միջոցների ազատությունը, որը

հանդիսանում է իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կարեւոր փորձերից մեկը: Բնականաբար, այն կոչված է մեծապես նպաստելու հասարակության եւ անհատի՝ հատկապես պետական իշխանության մարմինների գործունեության լուսաբանման մասով, փեղեկացված լինելուն: Ըստ պարասխանողի՝ այսօր խոսքը չի կարող վերաբերել փոքր լրատվամիջոցի կամ սուբյեկտի բացարձակ ազատությանը, հակառակ պարագայում այն կբախվի այլ անձանց նույնաբովանդակ անսահմանափակ ազատություններին, ինչը կհանգեցնի փոքր սուբյեկտների միջեւ շահերի բախման եւ կոնֆլիկտային իրավիճակի անխուսափելիության: Խնդրո առարկա լրատվամիջոցի ազատությունը ենթադրում է, որ պետությունը պարտավոր է ապահովել օպտիմալ հարաբերակցություն թույլատրելի վարքագծի եւ հնարավոր վարքագծի սահմանների միջեւ:

Տինգերորդ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի վիճարկվող դրույթները բովանդակում են Նանրային հեռուստառադիոընկերության օգնությամբ հանրության՝ փեղեկություններ եւ գաղափարներ սրանալու իրավունքը, ինչը նույնպես չի հանդիսանում բացարձակ իրավունք: Եվ այն նույնպես կարող է ենթարկվել սահմանափակումների Սահմանադրության 43 հոդվածում ամրագրված նպատակների իրագործման կապակցությամբ: Պարասխանող կողմի կարծիքով, Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ մասով երաշխավորված՝ լրատվամիջոցների եւ փեղեկավական այլ միջոցների ազատության իրավունքի օրենքով սահմանափակումն առավելապես գուցակցվում է խորհրդարանական աշխատանքների լուսաբանման մասին պաշտոնական փեղեկավորություն սրանալու յուրաքանչյուր անձի իրավունքի իրականացման հետ:

Վեցերորդ՝ պարասխանող կողմը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1996 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունված՝ Նանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ R (96) 10 հանձնարարականով նշվել է, որ հանրային հեռահաղորդակցության կազմակերպությունների խմբագրական անկախության երաշխավորման համար մասնակից պետությունները պետք է սրբազան հստակ պայմաններ, այնուամենայնիվ, նույն Նանձնարարականի առանձին դրույթների բովանդակությունից հետեւում է, որ օրենքով սահմանված դեպքերի համար չի բացառվում հանրային հեռարձակողների ծրագրային գործառնությունների փոփոխում, այդ թվում՝ նաեւ պետական մարմինների հսկողության ներքո (Նանձնարարականի հավելվածի I

բաժին): Դեռ ավելին, Նանձնարարականի հավելվածի VI բաժնով նախատեսվում է այնպիսի իրավիճակի գոյությունը, «... երբ հանրային հեռարձակող կազմակերպությունները կարող են պարտավորված լինել եթեր հեռարձակել պաշտոնական լուրեր, հայտարարություններ կամ հաղորդումներ, կամ լուսաբանել հանրային իշխանությունների գործողությունները կամ որոշումները, կամ փրամադրել եթերաժամ այդ մարմիններին...»: Տիշյալ Նանձնարարականով առաջարկվում է, որ նման դեպքերը պետք է սահմանափակվեն բացառիկ հանգամանքներով, լինեն որոշակիորեն սահմանված օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Յոթերորդ` «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններով ամրագրված դրույթների սահմանադրականության հարցի կապակցությամբ ներկայացված իրավական դիրքորոշման առնչությամբ, ըստ պարասխանողի, ՆՏ Սահմանադրության վկայակոչված 62 հոդվածը չի պարունակում իրավանորմ, որը բացառում է կանոնակարգ օրենքով ՆՏ Ազգային ժողովի լիազորությունների իրականացմանն առնչվող այլ հարաբերությունների կարգավորման հնարավորություն, դեռ ավելին, նույն ՆՏ Սահմանադրության 67 եւ 76 հոդվածները նույնպես նախատեսում են իրավահարաբերություններ, որոնց մանրամասն կարգավորումը պարվիրակվում է կանոնակարգ օրենքին:

4. Քննության առնվող հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՆՏ Սահմանադրության 27 հոդվածը, մի կողմից, երաշխավորում է յուրաքանչյուրի համար կարծիքի ազատ արտահայտման, խոսքի ազատության (ներառյալ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, սրանալու, փարածելու ազատության) իրավունքը, մյուս կողմից` կարելի է լրավամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը` որպես հիշյալ իրավունքների ապահովման երաշխիք: Այս ենթադրությունն առանձնակի շեշտվում է, որ «Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»:

Զանգվածային լրավամիջոցի անկախությունը, մասնավորապես, ենթադրում է ծրագրային քաղաքականության, հաղորդացանկի կազմման, հաղորդումների

ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնություն ու ազատություն, այդ գործընթացների վրա իշխանությունների որևէ ազդեցության բացառում: Այդ նկատառումներից ելնելով էր նաև, որ ՆՏ սահմանադրական փոփոխություններով հեռարձակվող լրավամիջոցների գործունեության կարգավորումը ՆՏ միջազգային պարավորությունների շրջանակներում ճանաչվեց որպես սահմանադրաիրավական գործառույթ եւ Սահմանադրության 83.2. հոդվածով նախատեսվեց. «Նեռարձակվող լրավորության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով սրեղծվում է անկախ կարգավորող մարմին...»:

Ինչպես ՆՏ Սահմանադրության 27 հոդվածի դրույթները, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Վանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը Կեղեկավորության ազատության եւ հանրային հեռարձակման անկախության ապահովման խնդիրների լուծումը Կեղեկավորության եւ օրգանական կապի մեջ: Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն հիշյալ փաստաթղթում, մասնավորապես, շեշտելով մամուլի ազատության հիմնարար սկզբունքի կարեւորությունը ժողովրդավարական հասարակությունում, առաջարկում է Եվրախորհրդի անդամ երկրներին օրենսդրությամբ երաշխավորել հանրային հեռարձակումների անկախությունը, որը ենթադրում է ծրագրային, խմբագրական ու կառուցակարգային ինքնուրույնություն: Միաժամանակ, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի բացատրական հուշագրի նախաբանի 3-րդ մասում շեշտվում է, որ հանրային հեռարձակման կազմակերպումը Կարգավորում է պետական նախապիպերից հենց նրանով, որ այն իրականացվում է անկախ եւ առանց իշխանության մարմինների որևէ միջամտության: Այդ հաղորդումները կազմակերպող մարմինների անկախության երաշխավորումը դիտարկվում է որպես հիմնարար սկզբունք: Շեշտվում է նաև, որ նույնիսկ պետական ֆինանսավորումը չի կարող միջոց դառնալ այդ մարմինների խմբագրական անկախության կամ կառուցակարգային ինքնուրույնության վրա ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրելու համար (Վանձնարարականի 5-րդ մաս): Վանրային հեռարձակման անկախությունը նշված Վանձնարարականով ճանաչելով որպես հիմնարար սկզբունք, պահանջ է առաջադրվում, որ այն պետք է զերծ լինի փնտրական, քաղաքական կամ վարչական ներազդեցությունից եւ ծառայի ողջ հանրությանը:

Տվյալ ոլորտի իրավական կանոնակարգման համար սկզբունքային նշանակություն ունի Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1641 (2004) 1 հանձնարարականում ամրագրված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային լրատվության հեռարձակումը պետք է փարբերել առելության կամ քաղաքական նպատակներ հետապնդող լրատվության հեռարձակումից, քանի որ հանրային լրատվության գլխավոր նպատակը գաղափարներ եւ արեղեկություններ փնտրելու, սրանալու եւ փարածելու ազատության անկողմնակալ ապահովումն է ողջ հանրության համար, որով եւ պայմանավորված է նման լրատվության անկախության անհրաժեշտությունը:

Նայաստանի Նանրապետությունը, 2000թ. դեկտեմբերին վավերացնելով Եվրախորհրդի կանոնադրությունը, պարտավորվել է առաջնորդվել վերջինիս դրույթներով, հաշվի առնել Նախարարների կոմիտեի եւ Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները եւ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել դրանց իրականացման համար:

5. Նայաստանի Նանրապետությունում հանրային հեռուստատեսության իրավական կարգավիճակը սահմանված է «Նեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՆՏ օրենքի 28 հոդվածով, որում, մասնավորապես, ամրագրված է, որ «Նանրային հեռուստառադիոընկերությունը հարուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Նանրային հեռուստառադիոընկերությունն ստեղծում է պետությունը՝ ապահովելու համար մարդու սահմանադրական իրավունքը, այսինքն՝ ազատորեն սրանալ քաղաքական, արտեսական, կրթական, մշակութային, մանկապարանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի եւ պարմության, մարզական, գվարձալի եւ հանրության համար կարելու ու նշանակալից այլ արեղեկարվություն, եւ գործում է սույն օրենքին, իր կանոնակարգին եւ Նայաստանի Նանրապետության օրենսդրությանը համապարասխան»: Միանշանակ է, որ որպես հիմնական նպատակ է դիտվում մարդու՝ ազատորեն արեղեկարվություն սրանալու իրավունքը, իսկ միջոցը՝ հարուկ կարգավիճակ ունեցող հեռուստառադիոընկերության առկայությունն է: Այսուհանդերձ, տվյալ օրենքն ընդունվել է 2000թ. հոկտեմբերի 9-ին եւ դրա դրույթները դեռեւս ՆՏ Ազգային ժողովի կողմից չեն համապարասխանեցվել ՆՏ սահմանադրական փոփոխությունների նոր պահանջներին: Այդ պահանջներին չեն համապարասխանեցվել նաեւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի

վերջին նախադասություններով, 49 հոդվածի «ե» կետով, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ եւ 5-րդ կետով նախադասված դրույթները, որոնցով չեն երաշխավորվում սահմանադրաիրավական անկախ կարգավիճակ ստացած մարմնի՝ Նանրային հեռուստառադիոընկերության, գործառնական անկախությունը եւ կառուցակարգային ինքնուրույնությունը: Ազգային ժողովը ցանկացած որոշում կարող է ընդունել իր նիստերի կամ առանձին հարցերի քննարկման հեռարձակման անհրաժեշտության մասին: Սակայն վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդիրը կապված է ոչ թե իրավակարգավորման առարկայի հանրային նշանակության կամ հեռարձակման նպատակահարմարության հարցի հետ, որի կարելիությունը չի վիճարկվում, այլ փարբեր սուբյեկտների միջև իրավահարաբերությունների կանոնակարգման իրավաչափության հետ: Փաստորեն, օրենքի վիճարկվող դրույթները, մասնավորապես, օրենքի 49 հոդվածի «ե» կետի իրավական բովանդակության շրջանակներում, ՆՏ Ազգային ժողովի գործունեության կազմակերպման առարկա են դարձրել նաեւ այլ մարմինների հետ փոխհարաբերությունների միակողմանի իրավակարգավորման հարցը, կամ սրեղծում են դրանց գործունեությանը միջամտելու հնարավորություն, որը չի բխում ՆՏ Սահմանադրության 27 եւ 62 հոդվածների պահանջներից: Ելակետն այն է, որ Կոնստիտուցիոնալ օրենսդիրն օրենքի նորմի միջոցով մեկնաբանել է Սահմանադրության 62 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «իր գործունեության կազմակերպման հարցերով» հասկացության բովանդակությունը: Դիտարկելով այս մեկնաբանությունը Սահմանադրության 5 հոդվածի, 6 հոդվածի 2-րդ մասի, 62 հոդվածի ողջ բովանդակության իմաստով, հարկ է նկատել, որ մեկնաբանությունը ոչ իրավաչափ է, քանի որ այլ մարմինների հետ իրավահարաբերությունների շրջանակներում Ազգային ժողովի՝ որոշումներ ընդունելու լիազորությունն սպառիչ կերպով սահմանված է Սահմանադրությամբ: «Իր գործունեության կազմակերպման հարցերով» բառակապակցությունը Կոնստիտուցիոնալ օրենսդիրն չի կարող եւ պետք չէ ներառի Նանրային հեռուստառադիոընկերության համար պարտականություն սահմանելու հնարավորություն (Կանոնակարգի 49 հոդվածի «ե» կետ) կամ Նանրային ռադիոընկերությանն օրենքով սահմանված պարտականությունից ազատելու հնարավորություն (Կանոնակարգի 112 հոդվածի 2-րդ կետ):

6. Քննության առարկա հարցի շրջանակներում ՆՏ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ օրենսդիր մարմինն առանձնահատուկ դեր ունի

յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Պաշխամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ բազմակարծության եւ երկխոսության մշակույթ է: Այն առաջին հերթին դրսևորվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելիս: Նասարակական հարաբերությունների կանոնակարգման նկատմամբ դրսևորվող մոտեցումները եւ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների թափանցիկ ու հրապարակային իրականացումը քաղաքացիական հասարակության ձեւավորման կարեւորագույն երաշխիքներից են: Մյուս կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական դափարանն իր փարբեր վճիռներում բազմիցս ընդգծել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովրդավարական համակարգերում իշխանությունների գործունեությունը պէտք է ենթարկվի նաեւ հասարակական կարծիքի ուշադիր վերահսկողությանը: Նայասփանի Նանրապետությունում վերջին 15 փարիների ընթացքում ձեւավորվել է նաեւ այնպիսի կայուն ավանդույթ, որ օրենսդիր մարմնի գործունեությունը եղել է առավել թափանցիկ ու հասու հանրության բոլոր շերտերին: Իր հերթին, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականը կարեւորելով հանրային հեռարձակման անկախությունը, միաժամանակ բացատրական հուշագրի թիվ 21 ուղղորդիչ ցուցումով նախատեսում է, որ հանրային հեռարձակման խնդիրն է նաեւ ապահովել քաղաքական բազմակարծությունը՝ խորհրդարանական փոքրամասնությանը, փարբեր քաղաքական ուժերին իրենց փեսակէպը ներկայացնելու համար փրամադրելով էթերաժամ:

ՆՆ Ազգային ժողովի, նրա մարմինների ու առանձին պարգամավորների գործունեության լայն հրապարակայնության երաշխավորումը, այդ թվում ներկայումս գոյություն ունեցող եւ ավանդույթ դարձած ձեւերի շրջանակներում, բխում է իրավական, ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքներից եւ պէտք է ապահովված լինի օրենսդրական ու կազմակերպչական անհրաժեշտ հիմքերով: Միաժամանակ, այդ հիմքերը պէտք է լինեն իրավաչափ, բխեն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի պահանջներից, չխախտեն սահմանադրական ինստիտուտների գործառնական ու կառուցակարգային անկախության պահանջները: Այդ հարցի առնչությամբ ՆՆ սահմանադրական դափարանն իր իրավական դիրքորոշումն արփահայտել է 11.01.2001թ. ՍԳՈ-278 որոշմամբ: Դրա հետ մեկտեղ, ՆՆ սահմանադրական փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին լրարվամիջոցների ազարու-

թյան ու անկախ գործունեության երաշխավորման համար: Վերջինիս ապահովումը ՆՆ Ազգային ժողովի առջև, մասնավորապես, խնդիր է դնում փոխկապվածության մեջ վերանայել եւ Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնել 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված՝ «Նեռուստատեսության եւ ռադիոյի մասին», 2003թ. դեկտեմբերի 13-ին ընդունված՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքների, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի, ինչպես նաեւ Կոլյալ խնդրին առնչվող այլ օրենքների համապատասխան դրույթները: Նիշյալ օրենքների դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՆՆ միջազգային պարտավորություններին համապատասխան Նանրային հեռուստառադիոընկերություն ստեղծելու իրավական երաշխիքները դեռեւս լիարժեք ու ամբողջական չեն: Խնդիրը շտապ համակարգային լուծում է պահանջում, եւ հիմնախնդրին առնչվող որեւէ օրենքի այս կամ այն դրույթի սահմանադրականության գնահատմամբ հարցն ամբողջությամբ չի սպառվում: Մասնավորապես, քննության առարկայի առնչությամբ միջազգային պրակտիկան վկայում է, որ հարցի սկզբունքային լուծման բանաձեւն օրենսդիր մարմնի գործունեության առավելագույն հրապարակայնության ապահովումն է՝ լրատվամիջոցների, այդ թվում հանրային, գործառնական ու կառուցակարգային անկախության երաշխավորման պայմաններում: Ինչ վերաբերում է իրավաչափ ձեւի ընտրությանը, ապա դա օրենսդիր մարմնի խնդիրն է: Բոլոր դեպքերում, միջազգային պրակտիկայում առկա ցանկացած ձեւի ընտրության պարագայում, պետք է իրավական երաշխիքներ ստեղծվեն, որպեսզի հանրային հեռարձակման պրակտիկայում օրենսդիր մարմնի գործունեության լայն հրապարակայնության եւ քաղաքական բազմակարծության ապահովումը չվրանգվեն: Տվյալ խնդրի լուծման ժամանակ, ելնելով նաեւ ՆՆ միջազգային պարտավորություններից, ՆՆ Ազգային ժողովն առաջին հերթին պետք է առաջնորդվի ՆՆ Սահմանադրության 27, 83.2 հոդվածների, ինչպես նաեւ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի, դրա բացատրական հուշագրի, Խորհրդարանական վեհաժողովի՝ Նանրային հեռարձակում թիվ 1641 (2004) 1 հանձնարարականի դրույթներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՆՏ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերին հակասող եւ անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններում, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ եւ 5-րդ կետով նախադասված դրույթները:

2. ՆՏ Սահմանադրության 62 հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 49 հոդվածի «ե» կետով նախադասված դրույթը:

3. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 փետրվարի 2007 թվականի
ՄԴՈ-678